ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 34/33-2 «24» 02 2025թ.

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) գիտական խորհրդի 2020թ. մարտի 12-ի թիվ 11/3 որոշմամբ հաստատված «ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերը» և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. Սահմանել, որ դպրոցներում մանկավարժական պրակտիկան վարելու նպատակով ԵՊՀ-ի կողմից նշանակված՝

1) խմբի ղեկավարը պարտավոր է ուսանողների՝ դպրոցում գտնվելու օրերին կազմակերպել դասալսումներ, տրամադրել մասնագիտական և մեթոդական աջակցություն, իրականացնել օրագրերի և խմբի մատյանի վարման ստուգում,

2) մանկավարժը և հոգեբանը պարտավոր են շաբաթական առնվազն երկու անգամ ուսանողների հետ դպրոցում կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ և տրամադրել խորհրդատվություն:

2. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ համապատասխան կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումներին, ուսումնամեթոդական վարչությանը և պրակտիկան վարող ԵՊՀ աշխատողներին:

Ռեկտոր՝ Հ. Վ. Հովհաննիսյան